

զգալով թէ որպիսի թակարդի մէջ ճգեւէ կ'ուզուի զիրենք, իրենց ապրուստը ջարերու առատարտութեան պարտական լինելու պատիւէն հրաժարեցան :

(Մնացեալը վաղը)

Ի ԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ԱՊՍՏԱՄԲԱԿԱՆ ՇՈՐՃՈՒՄ ՅՈՒՆԻԵԼԵԱՆ-ՐՈՒՄԷԼԻ

Երէկ գրած էինք թէ կայսերական կառավարութիւնը քանի մը հարիւր հազար ոսկւոյ փոխառութիւն պիտի ընէ Գաղղիոյ մէջ, փոխարէն ցուցնելով Չմիւռնիոյ երկաթուղւոյն հասոյթները :

Սթամպուլ կըսէ թէ այս լուրը անհիմն է. մանաւանդ որ Չմիւռնիոյ երկաթուղւոյն հասոյթը անդղիական ընկերութեան մը կը պատկանի :

—Դարձեալ Սթամպուլ կըսէ թէ Ալէքսանտր իշխանի կողմէ իբրեւ պատգամաւոր մայրաքաղաքս եկող Պ. Չօմարօֆ և Հաճի ֆէթրօֆ ընդ հսկողութեամբ ստիկանաց Գալաքէն նաւ դրուելով Պոլսոյ ոստիկանութեան պաշտօնատունը տարուելու են ուր կը մնան առանձին սենեկի մը մէջ առանց արտաքին հաղորդակցութիւն ունենալու :

—Թարիգ կըսէ թէ Ալէքսանդր իշխանը հրաժարելով, դադարէ է իշխանութենէ. այս դէպքը Պուլկարիոյ և Արեւելեան Բուստիլի մէջ մեծ զարմացում պատճառներ է :

—Չարը որ կանխաւ մերժած էր պուլկարական պատգամաւորութիւնը, առջի օր իւր ներկայութեան ընդունելով, ի պատասխանի իրեն մատուցեալ Ուղերձին պարսաւեր է Բուստիլի դէպքերը և յայտարարել է թէ ամբողջ Եւրոպա խնդիրը պիտի լուծէ :

—Խուճը մը եւրոպական լրագրաց թղթակիցներ գտնուելով այժմ ի Մուսթաֆա փաշա, Ադրիանուպոլսոյ զինուորական հրամանատար Թահիր փաշա պատուիրել է որ լրագրաց տնօրէններու կողմէ թուղթ ունեցող թղթակիցները միայն ընդունուին, իսկ ուրիշները արտաքսուին :

—Գրուած էր լրագրաց մէջ թէ ի Պեսարապիա 250 հազար առևտական զօրաց բանակ մը պատրաստուած է :

Օտէոայէն հոկտ. 2 թուական

նաւ զարնուած հեռագիր մը այս լուրը կը հասաւտէ. սակայն պատճառ ցոյց կուտայ թէ զինուորական փորձի համար համարմբուած են :

—Մուսթաֆա-Փաշայէն հասած վերջին լուրերը կը ծանուցանեն թէ ապստամբաց զինուորական զօրութեանց դիմը Ադրիանուպոլսէն անդին երկաթուղւոյ 38 դր. քիլոմետրէն կսկսի, ուր 9-10 հազար հոգի կը գտնուին քանի մը թմբանօթով, Հաղբէօյի մէջ ալ պուլկարական երկրորդ զօրաբաժին մը կայ 16 հազար հոգիէ բաղկացեալ, որ վրաններու ներքեւ բանակած է :

Բուստիլի գանազան քաղաքներու մէջ տակաւին ուրիշ զօրաց գունդեր ալ կան, սակայն որքանութիւնը յայտնի չէ, սա միայն յայտնի է որ Պուլկարաց նախկին եռանդը մարած է :

Հաշիւ եղած է որ օրը 600 հազար ֆրանք ծախք կ'ըլլայ քաղաքապահ զօրաց և կամաւորաց համար որոց թիւը 45 հազարի կը հասնի :

—Աւստրիական կառավարութիւնը իւր բոլոր հեռագրական կայարաններուն հրամայել է որ Սերպիա և Պուլկարիա զարնուած քաղաքական ոչ պաշտօնական հեռագիրները մերժեն :

Ասոր պատճառը սա է եզեր որ իրվադք, Սքլաօնք և Չէքերը բաղմաթիւ շնորհաւորական հեռագիրներ կ'ուղղեն եղբր իրենց Սերպ և Պուլկար եղբարց :

—Սխալ է Սերպիոյ կառավարութեան զինուորական պատրաստութիւնները դադարեցնելու լուրը : Ընդ հակառակին Սերպիա իւր պատրաստութիւնները ամենայն փութով յառաջ կը տանի : Ուսանողք խնդրել են զինուոր գլորուիլ, Դրամատունը Պետութեան դրամ կը վճարեն : Գաւառական վարժարանաց բոլոր աշակերտք զինուոր գրուելու փափաք կը յայտնեն : 1875 ի և 76 ի ապստամբապետք, Լիուպիպրաթիշ և Չարքօ Պէլկրատ հասեր են օտարազգի լեզէոն մը կազմելու համար :

Սերպիոյ երկաթուղւոյ ընկերութիւնը ամեն միջոց ձեռք առել է ամեն օր 11 զինուորական կառախուճը զրկելու համար Պէլկրատէն ի Նիշ, իւրաքանչիւր կառախուճը 50 կառքէ պիտի բաղկանայ, ճամբորդ եւ վաճառք փոխադրելն արգելուել է : Նիշէն

զօրաց դնդերը հարկ եղած տեղերը պիտի զրկուին :

Գանձուց նախարար Բէթրովից յաջողել է 12 ու կէս միլիօնի փոխառութիւն մը կնքելու :

Բէթրօ-Բովովիչ Գարաապոյցի ապստամբապետը Սօֆիա կը սպասուի :

Սերպիա գոհ պիտի լինի եզեր թէ Պուլկարական Մարտենի գաւառը իրեն տրուի :

—Յունաստանի Աղգային պանքան 24 միլիօնի փոխառութիւն մը ըրեր է տէրութեան, պայմանաւ որ ի պահանջել հարկին կրկնապատիկը և եռապատիկն ալ տայ :

—Վիէնայէն կը գրեն թէ Բէթրօ-Բովովիչ Գարաապոյցին քանի մը օրէ ի վեր վիտին կը գտնուի, Սերպիոյ դէմ կամաւորաց լեզէոն մը կազմելու համար, սակայն հազիւ 40 հոգի կրցեր է գտնել :

—Ադրիանուպոլսէն կը գրեն թէ Արեւելեան-Բուստիլի յատկացեալ 40 հազար ոսկւոյ արժողութեամբ վաճառք երկաթուղւոյ կայարանը կ'սպասեն :

Երկաթուղւոյ երթեւեկութեան գաղարուճը 2500 ոսկւոյ օրական վնաս պատճառել է երկաթուղւոյ վարչութեան :

—Ստամպուլ կըսէ թէ Գերմանիա, Աւստրիա և Ռուսիա որ Բուստիլի նախկին փիճակին վերահաստատման կողմն են, իրենց գաղափարաց գործադրութեան եղանակի մասին Անգղիոյ, Գաղղիոյ և իտալիոյ հետ անհամաձայն գտնուել են :

—Աւստրիոյ կայսրուհին Սերանիկ պիտի ուղեւորի, տեղական իշխանութեանց հրաման եղաւ որ մեծ պատուով ընդունին զինքը :

—Կոյց փաշա յառաջիկայ շաբթու Գերմանիա պիտի վերադառնայ :

—Մայրաքաղաքիս Հելլենական և Սերպիական դեսպանները առջի օր Բ. Դուռը կոչուեցան : Պ. Գունտուրիօթի հեռագրաւ կանչուած էր օրուան խնդրոյն վրայ տեսակցութիւն մ'ընելու համար :

—Ռուսական դեսպանուհի տիկին Նէլիտովի որ ժամանակէ մը ի վեր Գերմանիա կը գտնուէր, առջի օր մայրաքաղաքս վերադարձաւ :

—Սըր Տ. Ուօլֆ քանի մը օրէ ի վեր շարունակ կը տեսակցի Բ.

Դրան նախարարաց հետ Բուստիլի նակցութիւնք տակաւին սկսեցին, սակայն յոյս կայ որ Սպիտ փաշայի Պերլինէն վերադարձէ վերջը որ այսօր մայրաքաղաքս կ'սպասուի, վերստին պիտի լուծնակուին :

—Արտաքին գործոց նախարար Սախա փաշա Պատէն-Պատէն մէջ Գերմանիոյ կայսեր հետ սակցելով տեղեկացեր է որ Գերմանիոյ և Բ. Դրան միջեւ մասձայնութիւն չը կայ :

—Ալէքսանդր իշխանը Ֆիլիպէ կը գտնուի :

—Կրեաէի մէջ իրաց վրէժներս լսանդարեր է բուրեւելքի :

ԱՂԳՍՅԻՆ ԼՈՒԲԵՆ

Պրուսիոյ առաջնորդ Գերմանիա Բարթոլոմէոս Ս. Արքեպիսկոպոս իւր հօր և եղբոր անակնկալ մտնուան պատճառաւ անձնակցութեան երթարկութեան անջի օր մայրաքաղաքս եկաւ միւլիթարութիւն իւր վշտաց դարման տկարութեան :

Նորին Սրբազնութեան հասարակաց տնակէ ի Բերա շան-դաշի Շէքէրեան Մեծ Բուստիլի էֆէնտիի օդատունը :

Շնորհաւորելով Նորին Սրբազնութեան գալուստը միւլիթարութիւն և առողջութիւն կը թեմք :

Նորին Սրբազնութիւնը Ս. Պատրիարք Հօր այցելութեան երթալով ի Պատրիարքարան կարօրէն տեսակցեցաւ :

Գաւրէժէն առ մեղ յատու վերջին տեղեկութիւնը յաւան կը նկարագրեն տեղւոյն Աղգայի վիճակը որուն պատճառ եղած ճերմակեան Տ. Մեսրոպ վարդապետի անփութութիւնը և չար սիրութիւնը :

Մեր ստացած սոյն տեղեկութիւնները պիտի հրատարակուին յառաջիկային :

Երբեմն ներքին գործոց նախարար վսեմ. Սախա էֆէնտով օր փոխադարձ այցելութեան գնաց Ս. Պատրիարք ի Պատրիարքարան :

Ս. Պատրիարք հայրը երբ Գառական գործոց նախարար

ձեկտէտ փաշախ այցելու-
ան գնաց առջի օր :

Մշոյ Առաջնոր Գեր. Գրիգորիս
իսկուպոս Ալէաթ ճեան յառաջի-
շարաթ օր իւր պաշտօնատե-
կողմերի :

Գաղատիոյ Առաջնորդական
պաշտ Գեր. Կարապետ վար-
պետ Բագրատունի կիրակի
իւր պաշտօնատեղին ուղեւո-
ւա :

Կը լսեմք թէ Ամեն. Խորիմեան
ազան Բերախ քարոզիչ պիտի
գառի :

Կաթողիկոսական յանձնաժո-
ղ իւր առաջին նիստն ըրաւ ի
թաթիա : Ամեն. Ս. Պատրիարք
ընդ ներկայ չէր սոյն գումար-

Կրօն. ժողովը մեծամասնու-
թեամբ չունեցաւ երէկ . ուստի
մը որոշումներու գործա-

դրութիւնը Ս. Պատրիարք Հօր
կամաքը յանձնեց : Ներկայ ժո-
ղովականաց թիւն էր 6 : Եթէ
Ս. Պատրիարք Հայրը ժողովին
տնօրինութիւններն ընդունի , իբր
օրինաւոր որոշում պիտի նկատ-
ուին և հրատարակութեան տըր-
ուին :

ՀՐԱՏԱՐԱԿԻՉՔ
ՆՇԱՆ Կ. ՊԵՏՐՊԵՏԱՆ
ԵՒ
Ս. ՏԷՕՎԼԷԹԱՆ

Էօթէն-Սիւ Գրոմսացի մեծամուն
վիպասանին սոյն նշանաւոր գործին
Բ. տպագրութիւնն , զոր Մատիս
Մ. Խմբագիր Կ. Ս. Իսթիւճեան է-
ֆէնտի վերստին աչքէ անցնելով եւ
լեզուի մաքրութեան ու ոճերու գե-
ղեցիկ բացատրութեանց մեծ խնամք
տանելով մեզ յանձնած էր , հասած
է իւր Գ. հատորին , որ աւարտած
ու ի վաճառ հանուած է :

Այժմ պիտի սկսիմք Գ. սոյն է
վերջին հատորի հրատարակութեան ,
որ պիտի պարունակէ 70 էն աւելի
մեծ և փոքր պատկերներ :

Ս. Բ. և Գ. հատորներու թղթա-
կազմին գինն է՝ իւրաքանչիւրն 30
դրուշ :

Գ. հատորի բաժանորդագինն է
25 դր :

Չորս հատորն ի միասին աւանդ-
ներուն համար 100 դր :
16 երեսէ բաղկացեալ մէն մի
թերթ 50 փարայ :

ԸՆԹԵՐՑՈՐՈՆ
ԿԱՄ
ՍԻՐՈՒՆ ՉԲՕՍԱՐԱՆ

Մանկանց երկրորդ գիրքը
56 գեղեցիկ պատկերներով
զարդարուած

Սոյն գրաստորքը ասկէց սուջ
հրատարակեալ Գ. Ս. ԿԱՆ ԿԱՄ ՄԱՆ-
ԿԱՆՅ ԳՐՔԻՆ Բ. մասն է . և կը պա-
րունակէ՝ մանկական երգեր , կարճ
հասուածներ , առածներ , առակներ
և փոքր պատմութիւններ :

Գինն 2 դահեկան :

Կը վաճառի Մարգարտան գրա-
տունը , Մերձան փողոց : Գալորոցաց
համար Օ/Օ 15 գեղջ կը լինի :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ՈՒՂԵՅՈՅՑ
Կանանց եւ Օրիորդաց
Ի կեանս
Առանին եւ ընկերական

Թարգմանեց ի Գերմաներէնէ
Մ. Կ. ՆԱԶԻԿԵԱՆ
Անգամ արտաքին թղթակցութեան
դիւանին ի դուռն Սպարապետու-
թեան .

Պարունակութիւն . — Այցելու-
թի նք , այցետոմար . — Խօսակցու-
թիւն և ընկերային վարմունք . — Կար-
գ աղբիւրի կոչումքի . — Սեղանի
սովութիւնք . — Պարահանդէս . —
Խաղ . — Կանանց ի ճանապարհոր-
դութեան , օտար տանց մէջ օթեւա-
նած ատեն ունենալիք վարմունքն եւ
պարտիք հիւրընկալութեան . — Քա-
ղաքավարութիւն . — Ընկերային յա-
րաբերութիւնք օրիորդաց ընդ արս .
— Վայելուչ տան մը կա՛ն կորստեաց
կարգադրութիւնք . — Արդուզարդ .
դարձիք արդուզարդու . — Հանդեր-
ձանենակ . — Վարձուք . վարձուք
ծառայից հետ . — Նամակագրութիւն
տիկնայց :

Վաճառման կեդրոնատեղին է ,
տպարան Պարսիզպանեան , Կ. Պոլիս
Րիզա փաշա խան թիւ 5 :

Կ. գտնուի նաեւ ի Բերա Պ. Վայ-
սի գրատունը , Ղալաթիա Յ. Արշակ
էֆէնտի վաճառանոցը . ի Պահճէ
գափու ջրավաճառ Պոլոս աղայի խա-
նութը և Հայ գրավաճառաց քով ի
գին 10 դր :

արկղէ լիցնենք , հրապարակի կառքով մը զայն
ամենէն մօտ կայարանը պիտի տանինք , և դուռն այս
գիշեր Ամնիէւի տունը պիտի երթաւ պառկելու :

— Յայնժամ որ դուռն կը փակաքիս , ընելու
առարկութիւն մը չունիմ :

— Դուռն այսպէս առանց աղմուկի և առանց դը-
րացեաց հետաքրքրութիւնը զարթուցանելու կը
դետեղուիս : Ասկէց զատ , ամբողջ վաղուան օրը
չորս կողմէ դիտելու , կարասեաց ցուցակը շինելու ,
բանալիները փականքինմէջ դնելու , դուռները բա-
նալու դոցելու լիուրի ժամանակ պիտի ունենաս ,
և վերջապէս մեր սիրելի կաթիլիւր ընդունելու պիտի
պատրաստուիս :

— Բանի մը ամիս Բարիդէն հեռի պիտի մնամ :
Ինչպէս իրար պիտի տեսնենք :

— Ես խորհած եմ այդ բանին վրայ , պատասխա-
նեց Պէճո . Ամեն կիւրակէ երեկոյ Ամնիէւ կը գամ :
Բաց ի փողոցի վրայի մեծ դռնէն , պարտիզին
խորը պզտիկ դուռ մ'ալ կայ , որն որ անմշակ հողե-
րու վրայ կը նայի : Ամեն կիւրակէ , ժամը տասն ու
կէսին և տասն և մէկին ատենները քեզ հոն պիտի
ուպասեմ , վերջը , երբ ծննդարեւութեան ժամա-
նակը մօտենայ , աւելի ստէպ պիտի գամ , ամեն օր՝
եթէ պէտք լինի :

— Շատ աղէկ , ըսաւ Սօլանժ :

Գլխարկը դրաւ , հայելիի մը առջեւ մազերը
չակեց , յետոյ Պէճոյի դարձաւ , ըսելով .

— Պատրաստ եմ :

— Բայց ուրե՞նք դուք Նախախնամութիւն էք ,
գոչեց կավրիէլ :

— Այսօր ձերը , պատասխանեց Պէճոյի մեղսա-
կիցը , որ ամեն յանդգնութիւն ունէր :

— Չեղ մերժել չեմ ուզեր , կրկնեց դեռատի աղ-
ջիկը , ուղածիդ պէս պիտի ընեմ , միայն թէ . . .

— Ը՞տէք :

— Կարելի եղածին չափ նուազ ծանրանալ կ'ու-
ղեմ ձեր վրայ , զիս աշխատցնել պիտի տաք :

— Այս արդէն որոշուած է , միտեղ պիտի աշ-
խատինք :

— Ա՛հ , երբէք չը պիտի կարենամ պարտահատոյց
լինել ձեզ , ըսաւ դեռատի աղջիկը , ձեր այսչափ
բարութիւնը ինչպէս փոխարինեմ :

— Քիչ մը զիս սիրելով , պատասխանեց Սօլանժ :

— Արդէն ես չատ կը սիրեմ զձեզ , ըսաւ երկչո-
տութեամբ կաթիլիէլ :

— Վերջապէս , գոչեց Սօլանժ կատարելապէս
կեղծեալ ուրախութեամբ և յուզմամբ մը , ուրե՞նք
բարեկամուհի մը պիտի ունենամ , ճշմարիտ բարե-
կամուհի մը :

Եւ իւր թեւերը բացաւ նորատի աղջկան :

Կավրիէլ անոր վիզը փարեցաւ և իսկոյն սկսաւ
հեծեծանօք լալ :

Վայրկեանէ մը վերջը , երբ նորատի աղջիկը մի քիչ
հանդարտեցաւ , Սօլանժ ըսաւ անոր .

— Սիրելիդ իմ կավրիէլ , միայն մօտակայ գիշերը
պիտի անցնէք այս աղտեղի խցիկին մէջ , այս իրիկ-

ՀԱՅ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՆՊԱՐԵՂԻՆՍՅ

Կ. Պոլիս Թահմիզ Էօնիս փողոց թիւ 59

ճիշդ Գեմ առ Գեմ աղբիւրին

(Հաստատեալ 1 օգոստոս 1885)

Շատեր ազնիւ մերազնէից՝ մի քանի ձախող ձեռնարկունեւրու անյաջողութեան վրայ, իրենց հաստատ կարծիք շինած էին թէ, Հայը այս տեսակ գործ չկրնար յառաջ տանիլ, այլ միայն օտարն է ընդունակ:

Այս թիւը կարծիք չնշելու համար, վաճառատանս հաստատմանէն յայս օր անցած ժամանակամիջոցը բաւական ապահով երաշխիք մը լինելով, յուսարից եմ թէ սիրելի ազգայնոցս կողմանէ քան զառաջինն առաւել համակիր ընդունելութիւն վայելելու բախտաւորութիւն պիտի ունենամ:

Վաճառատանս մէջ կը ծախուի նպարեղէնի վերաբերեալ ամեն տեսակ ընտիր ապրանք՝ փոքր

թէ մեծ քանակութեամբ, « օգոստոս 1885 » և թէ երաշխաւորեալ վաճառունը կ'ԱՆՆՈՒՆ ԵՆ:

Մեծ Գեմ Գեմ

ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ ՏՊԱՌՈՒԹԻՒՆ ԱՅՅԵՏՈՄՈՒ

Հաւաքոյն քառթօնի վրայ ամէն լեզուաւ կը պատրաստուի ի գին 100 հատը 10 դհկ. պէտք ունեցողները պէտք է գիմեն յԱրամեան տպարան, Յակոբեան խան 13 Կ. Պոլիս:

— 0 —

ԹՂԹԱՎԱՅԱՌ—ԳՐԱՎԱՃԱՌ

Զ. ԹՈՐՈՍԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Պատիւ ունին ծանուցանել արդոյ հասարակութեան թէ իրենց վաճառատան մէջ Պահէ-Գարու մեծ մաքսի կարգ թիւ 46: Ֆրանս. Հայ. ամեն տեսակ գրքեր, այլ և այլ Ագլաններ, դպրոցական ամեն տեսակ պիտոյք, նորելու գրիչներ և քանակներ. վաճառատան վերաբերեալ տեղեկներ և թղթեր գէնք, ընտիր սիկառի թղթեր, ժօպ. հոտաւէտ շէքսթուէներ

կը վաճառուին խիստ աժան դիւներով, Յրանս. գրքերու մասին յանձնարարութիւնը փութով կը կատարուին:

Գործածուած գրեանք և « Թէմպ-ուր-փօթ » կը գնուին, վաճառունը միշտ կանխիկ:

ՆՈՐ ՀՐԱՏՈՐԱԿՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՌՍՏ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Յօրինեաց ԽՈՐԷՆ Վ. ԳԱՐ. ԱՇԸԽԵԱՆՅ

Հրամանաւ հեղինակին Տ. Խորէնայ Եպիսկոպոս Հ. Վ. Արմաշու

Հասարակաց կրթութեան սպասօնէին վաւերացմամբ

Երկրորդ տպագրութիւն

Ի Նիկոմիդիա Ի տպարանի Զ. Ս. Աստուածածնի վանացն 1884

Տրամաբանութեան համառօտ այս դասագիրքը՝ որ 1871 թուականին տպագրուած է՝ ազգային վարժարանաց մէջ կարեւոր պէտք մը լեցնելու գործածուելով՝ սպասած և շատ տեղերէ խնդրուած էր: Հեղինակը, Արմաշու վանահայր Գեր. Խորէն սըր-

ազան, վերստին այժէ անցնելով տպագրել տուած է:

Կը գնուի գրավաճառանց քով Գինն է (6) վեց դահեկան:

ՀԱՅ ԹՂԹԱՎԱՃԱՌ

Թահմիզ փողոց, աղբիւրին մաս, թիւ 70

Այս վաճառատուն՝ որ միտարիէ աւելի ժամանակէ հետեւ իւր յաճախողները գոհացնելու ջանք չէ խնայած, կը ծանուցանէ թէ Չինաստանի և յայտնի բերքերէն այս անգամ անազան տեսակ (չայ) բերելու ամէն յատկապէս, և կը խնայէ սիրելի ազգայիններէ, մանաւանդ գաւառացի Հայ (արմաշու) օնճիւններէ որպէս զի հաճին որ մի անգամ ի մօտոյ տեսնել իւր ազրանքներն և փորձել թէ տեսակաց լաւութիւնը, և թէ՛ գիններու աժանութիւնը:

ՏԷՐ—ԽՄԲԱՅԻՐ Մ. Յ. ՄԷՂԻՔԵԱՆ

ուրնէ կամ վաղ առաւօտ ձեր մանր մունր բաները պիտի ժողուէք և ձեր արկղին մէջ դնէք: Եթէ հարկ դատէիք, ձեր մեկնումը օթեւանապետին իմացուցէք: Եթէ ձեզի հարցաքննէ, ամենէն դիւրինը անոր չպատասխանել է: Վաղը կառքով մը պիտի գամ ձեզ առնելու: Չեմ կրնար ըսել թէ ժամը քանիին հոս կրնամ լինիլ, բայց ժամը հինգէն վերջը ինձ սպասեցէք:

— Իմ պատրաստութիւնքս երկար չեն տեսեր, պատասխանեց կավրիէլ, վաղը ժամը հինգին մեկնելու պատրաստ պիտի լինիմ:

Այլ եւս ըսելու բան մը չ'ունենալով, Սօլանժ՝ այսչափ լաւ յաջողուին վրայ սքանչազամ, կավրիէլէն բաժնուեցաւ:

Փողոցը առաջին պատահած պարագայ կառքը նստաւ և տուն դնաց:

Նա ալ, արկղ մը լեցնելու բաներ ունէր, որոնք անհրաժեշտ էին իւր յ'Անիէն ընակութեան ժամանակ: Կորսնցնելու ժամանակ չ'ունէր, վասն զի պէտք էր որ կավրիէլը հօն տանելէն առ նուազն քանի մը ժամ յառաջ տուն գացած ըլլար: Նա այլ և այլ բաներով խնդրուած լեցուն արկղը կը դրցէր, երբ Պէնո եկաւ, անհամբեր իւր մեղսակցին կավրիէլի տուած այցելութեան հետեւանքը իմանալու:

— Վաղը յ'Անիէն դեռեղուած պիտի լինինք, ըսաւ անոր ուրախութեամբ Սօլանժ:

— Կեցցեա, ըսաւ Պէնո ձեռուրները շփելով:

— Կը տեսնես, ժամանակ չը կորսնցուցի, արկղ պատրաստ է:

— Երբ կը մեկնիս:

— Վաղ առաւօտ: Պէտք է որ ժամանակ ունենամ գործերս կարգադրելու և պղտիկը երթալ առնելէ յառաջ տունը այցելելու:

— Այդ բացարձակապէս պէտք է: Բայց ինչու համար այս իրիկուրնէ չես մեկնիր:

— Այս երեկոյ: Միթէ չ'ես տեսներ թէ գիշեր է . . .

— Սիրելիս, պատասխանեց ուժգնութեամբ Պէնո, խոհեմութեան համար պէտք է ամեն կարեւոր միջոցները ձեռք առնուլ: Բաներ կան, որ նախամեծար է գիշերը ընելը, այդպէս է, վասն զի գիշերը ցերեկէն նուազ յստակ կը տեսնուի: Ընդհանրապէս դռնապանները հետաքրքիր են, քու կիներուդ բան մը ըսիր:

— Այս, մօրաքոյր մը հնարեցի ի Պոռտօ, և ըսի որ երեք կամ չորս ամիս անոր պիտի երթամ:

— Շատ աղէկ, կը գովեմ հնարագիտութիւնդ: Միթէ ծանր է՝ այս արկղը, ըսաւ Պէնո, անոր մէկ ժայրէն վերցնելով:

— Պէտք չ'է որ թեթեւ ըլլայ: Որովհետեւ տասն և հինգ օրէն հոս դալու դիտաւորութիւն չ'ունիմ, անոր համար պէտք ունենալիք բաներուս ամենքն ալ մէջը դրի:

— Պատուական նախազգուշութիւն, ըսաւ Պէնո: Հաւ ուրեմն, սիրելիս շարունակեց նա, երկուքնիս